



ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Զաղաքային «Կումայրի» թերթի հավելված

1991 թ. հոկտեմբեր, № 48: Գինը՝ 50 կոպ.

ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐ

Հայաստանը օդային կամուրջներով է կապվել սովետական և արտասահմանյան բազմաթիվ քաղաքների հետ: Երևանում ու Լենինականում իրար հետևից վայրէջք են կատարում մարդատար և փոխադրական ինքնաթիռներ, որոնք տեղ են հասցնում փրկարարների ու շինարարների կամավոր ջոկատներ, բուժաշխատողների, ուրիշ մասնագետների՝ երկրաշարժից տուժած Լենինականին, Կիրովականին, Ապիտակին, մյուս բնակավայրերին առաջին օգնությունը ցույց տալու համար:

Անվերջանալի է օգնության հոսքը, որը փաստորեն տոր է ծավալվում: Առաջինը Հայաստանի ժամանածներից է «Կոմիչին» տեխնոլոգիալ շինարարական միավորման 80 հոգուց բաղկացած ջոկատը: Նրանց մեջ կան բարդ կլիմայական պայմաններում աշխատանքի մեծ փորձ ունեցող զոդողներ, բետոնագործներ, ատաղձագործներ, վարորդներ և այլ մասնագետներ: Ջոկատը իր հետ բերել է էքսկավատորներ, ավտոկոնկրետներ, զոդողի կտրող ապարատներ, տրակտորներ, բուլդոզերներ, հա վաքովի պահեստաշենքեր և այլ անհրաժեշտ սարքավորումներ: Կոմիչից եկածները ար-

դեն ձերնամուխ են եղել ավերված շինությունների մաքրման աշխատանքին:

Կազանից ինքնաթիռները Հայաստան են բերել ավտոկոնկրետներ, բուլդոզերներ, կոնսրետորներ, ինչպես նաև 800 կիլոգրամ պլազմա և դոնորական արյուն:

Ֆրանսիայից, Իտալիայից, Օվեցարիայից և այլ երկրներից եկած ինքնաթիռներից հետո վայրէջք կատարեցին Ժողովրդական Բուլղարիայի երկու ինքնաթիռներ, որոնք տեղ հասցրին հսկիչ փրկարար ծառայության քսան մասնագետների, որոնք բերել են վարժեցված որոնող շներ, ինչպես նաև վրաններ, վերմակներ, զանազան սննդամթերքներ, դեղորայք:

Բուլղարացի փրկարարների հետ ժամանած «Մոֆիայի տորություններ» թերթի հատուկ թղթակից Էդի Ռաֆայելյանը հարողեց. «որ բուլղարացի ժողովրդից հայ ժողովրդի դի ցամբ ու կակիծը ընկալեցին որպես իրենց սեփականը: Ժողովրդից հայտնաբերված կու օրը իրենց անձնական միջոցներից հարյուր հազար լև հատկացրին երկրաշարժից տուժածներին օգնելու համար:

(ԱՐՄԵՆՊՐԵՍ)



Փյունրիի ՊԱԿ-ի շենքը:

Լուսանկարը Հճ. Կարապետյանի



Փոլպայի ֆաբրիկայի մասնաշենքեր երկրաշարժից հետո:



Լուսանկարը Հճ. Կարապետյանի

